

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և  
Թուրքմենստանի կառավարության միջև Եկամուտների և գույքի  
կրկնակի հարկումը բացառելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Թուրքմենստանի կառավարությունը,

ուստի Պայմանավորվող պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու ձգտումով և Եկամուտների ու գույքի կրկնակի հարկումը բացառելու, հարկերի վճարումից խուսափելու կանխելու և հարկային խտրականություն թույլ չտալու նպատակով որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

### Հոդված 2

Ոնդգրկվող հարկեր

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմինների կողմից Եկամուտներից և գույքից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտներից ու գույքից գանձվող հարկեր են համարվում Եկամուտների ընդհանուր գումարից ու գույքի ընդհանուր արժեքից կամ դրանց առանձին տարրերից գանձվող հարկերը, ներառյալ շարժական և անշարժ գույքի օտարումից ստացված Եկամուտները, աշխատավարձից կամ ձեռնարկությունների կողմից վճարվող վաստակի ընդհանուր գումարից գանձվող հարկերը, ինչպես նաև գույքի արժեքի ածից գանձվող հարկերը:

3. Գոյություն ունեցող հարկերը, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը, հանդիսանում են, մասնավորապես.

ա) Հայաստանի Հանրապետությունում՝

ի) շահութահարկ,

ii) Եկամտահարկ,

- iii) գույքահարկ,
- iv) հողի հարկ,
- (այսուհետ՝ հայկական հարկ)

- բ) Թուրքմենստանում՝
    - i) շահույթի (Եկամտի) հարկ,
    - ii) Եկամտահարկ ֆիզիկական անձանցից,
    - iii) ընդերքի օգտագործման համար հարկ,
    - iv) Զերնարկությունների գույքահարկ,
    - v) հողի համար վճար,
    - vi) տրանսպորտային միջոցների տերերից հարկ,
- (այսուհետ՝ Թուրքմենստանի հարկ):

4. Համաձայնագիրը կիրառվում է նաև բոլոր կամ համանման հարկերի նկատմամբ, որոնք կգանձվեն ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից հետո։ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ժամանակին կիրագեկեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենսդրություններում կատարված էական փոփոխությունների մասին։

### Հոդված 3 Ընդհանուր դրույթներ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե համատեքստից այլ բան չի բխում.

ա) «մի Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» արտահայտությունները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստանի Հանրապետություն կամ Թուրքմենստան,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և, երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, ներառում է տարածք, ներառյալ ներքին ջրերը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավագորություն՝ միջազգային իրավունքի նորմերին և ներքին օրենսդրությանը համապատասխան,

գ) «Թուրքմենստան» տերմինը նշանակում է Թուրքմենստան, և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, ներառում է Թուրքմենստանի տարածքային ջրերից դուրս գտնվող ցանկացած երկրամաս, որը, միջազգային իրավունքի և Թուրքմենստանի օրենսդրությանը համապատասխան, հանդիսանում է այնպիսի երկրամաս, որի սահմաններում Թուրքմենստանը կարող է իրականացնել իր իրավունքները ծովի հատակի, ընդերքի և դրանց բնական պաշարների նկատմամբ,

դ) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

Ե) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած կորպորատիվ կազմավորում կամ ցանկացած այլ կազմակերպություն, որը հարկման նպատակների համար դիտարկվում է որպես կորպորատիվ կազմավորում,

զ) «Մի Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» արտահայտությունները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստանի Հանրապետության կամ Թուրքմենստանի օրենսդրությանը համապատասխան գրանցված ձեռնարկություն,

է) «միջազգային փոխադրում» արտահայտությունը նշանակում է Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային, գետային նավով կամ օդանավով, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի փոխադրումն իրականացվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող կետերի միջև,

ը) «իրավասու մարմին» արտահայտությունը նշանակում է.

ի) Հայաստանում՝ ֆինանսների նախարարությունը կամ դրա լիազոր ներկայացուցիչը,

ii) Թուրքմենստանում՝ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունը և գլխավոր պետական հարկային տեսչությունը կամ դրանց լիազոր ներկայացուցիչը,

թ) «ազգային անձ» արտահայտությունը նշանակում է.

ի) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա, որոնք ստացել են այդպիսի կարգավիճակ Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագիրը կիրառելիս սույն Համաձայնագրում չսահմանված ցանկացած արտահայտություն կունենա այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ պետության օրենսդրությամբ՝ այն հարկերի առնչությամբ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը, եթե ենթատեքստից այլ բան չի հետևում:

#### Հոդված 4 Ուղղիդենտ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մի Պայմանավորվող պետության ռեգիդենտ» արտահայտությունը նշանակում է անձ, որն այդ պետության օրենսդրությամբ այնտեղ ենթակա է հարկման բնակության

վայրի, գրանցման վայրի, մշտական գտնվելու վայրի կամ այլ համանման չափանիշի հիման վրա: Այդ արտահայտությունը, սակայն, չի ներառում անձին, որը ենթակա է հարկման այդ պետությունում, միայն այդ պետությունում եկամուտների աղբյուրներից կամ այդտեղ գտնվող գույքի առնչությամբ:

2. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ:

ա) նա համարվում է այն պետության ռեզիդենտը, որտեղ ունի մշտական կացարան, եթե նա երկու պետություններում էլ ունի մշտական կացարան, ապա համարվում է այն պետության ռեզիդենտը, որտեղ նա ունի ավելի սերտ անձնական և տնտեսական կապեր /կենսական շահերի կենտրոն/;

բ) եթե պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, չի կարող որոշվել, կամ եթե նա պետություններից ոչ մեկում չունի մշտական կացարան, ապա համարվում է այն պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում, կամ եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ չի բնակվում, ապա համարվում է այն պետության ռեզիդենտը, ում քաղաքացին է հանդիսանում,

դ) եթե Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը նրան դիտում է որպես իր քաղաքացի, կամ եթե նա չի հանդիսանում դրանցից և ոչ մեկի քաղաքացի, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները տվյալ հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այդ դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձ չհանդիսացող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ գրանցված է:

## Հոդված 5 Մշտական ներկայացուցչություն (հաստատություն)

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական ներկայացուցչություն» (հաստատություն) արտահայտությունը նշանակում է գործունեության մշտական վայր, որի միջոցով լիովին կամ մասնակիորեն իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական ներկայացուցչություն» (հաստատություն) արտահայտությունը մասնավորապես ներառում է.

- ա) կառավարման վայրը,
- բ) մասնաճյուղը,

- գ) գրասենյակը,
- դ) առևտորի վայրը,
- Ե) ֆաբրիկան,
- զ) արհեստանոցը,

է) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների հետախուզման, մշակման կամ արդյունահանման ցանկացած այլ վայրը:

3. «Մշտական ներկայացուցչություն» (հաստատություն) արտահայտությունը ընդգրկում է նաև.

ա) շինարարական հրապարակը, շինարարական, մոնտաժային կամ հավաքման օբյեկտը, կամ նշված օբյեկտների հետ կապված հսկողական գործունեությունը, բայց միայն այն դեպքում, եթե դրանց հետ կապված աշխատանքների տևողությունը գերազանցում է տասներկու ամիսը:

բ) ծառայությունների մատուցումը, ներառյալ խորհրդատվական ծառայությունները, ձեռնարկության կողմից այդ նպատակների համար ձեռնարկության վարձած ծառայողների կամ այլ անձնակազմի միջոցով, բայց միայն, եթե այդ կարգի գործունեության տևողությունը (մեկ կամ մի քանի օբյեկտների համար) երկրի սահմաններում ընդհանուր առնամբ կազմում է ավելի քան տասներկուամսյա ժամանակահատվածը կամ ժամանակահատվածներ:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ մի Պայմանավորվող պետության ձեռնարկության գործունեության հետևյալ տեսակները չեն դիտարկվում որպես մյուս Պայմանավորվող պետությունում մշտական ներկայացուցչության (հաստատության) միջոցով հրականացվող.

ա) կառույցների օգտագործումը բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահպանման կամ ցուցադրման նպատակների համար,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահպանման կամ ցուցադրման նպատակների համար,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակելու նպատակների համար,

դ) մշտական գործունեության վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գննան կամ տեղեկությունների հավաքման համար,

ե) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության հրականացման նպատակով,

զ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես «ա»-ից «ե» ենթակետերում թվարկված գործունեության տեսակների ցանկացած

համակցության իրականացման համար՝ պայմանով, որ այդպիսի համակցության արդյունքում առաջացած գործունեության մշտական վայրի համակցված գործունեությունն ունի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, եթե անկախ կարգավիճակով գործակալ (որի մասին խոսվում է սույն հոդվածի 7-րդ կետում) չհանդիսացող անձը գործում է՝ Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը դիտարկվում է որպես առաջինը հիշատակված պետությունում մշտական ներկայացուցչություն (հաստատություն) ունեցող ցանկացած գործունեության առունով, որը այդ անձը ձեռնարկում է ձեռնարկության համար, եթե այդ անձը.

ա) առաջին հիշատակված պետությունում ունի և սովորաբար օգտագործում է՝ ձեռնարկության անունից կոնտրակտներ կնքելու լիազորություն, բացառությամբ, եթե այդ անձի գործունեությունը սահմանափակվում է սույն հոդվածի 4-րդ կետում նշվածով, որը եթե նույնիսկ իրականացվել է գործունեության մշտական վայրի միջոցով, համաձայն այդ կետի դրույթների, այդ գործունեության մշտական վայրը չի վերածում մշտական ներկայացուցչության (հաստատության),

բ) չունի այդպիսի լիազորություններ, բայց սովորաբար ապրանքների կամ արտադրանքի պաշարներ է պահում առաջինը հիշատակված պետությունում, որտեղից նա դրանք կանոնավոր մատակարարում է՝ ձեռնարկության համար:

6. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պայմանավորվող պետության ապահովագրական ձեռնարկությունը, բացի վերապահովագրության դեպքերից, կիամարվի մշտական ներկայացուցչություն (հաստատություն) ունեցող մյուս Պայմանավորվող պետությունում, եթե նա անկախ կարգավիճակով գործակալ չհանդիսացող անձի միջոցով, որին վերաբերում է սույն հոդվածի 7-րդ կետը, այդ մյուս պետության տարածքում ապահովագրական մուծումներ է հավաքում կամ ապահովագրում է այնտեղ հնարավոր ռիսկից:

7. Ձեռնարկությունը չի դիտվում որպես Պայմանավորվող պետությունում մշտական ներկայացուցչություն (հաստատություն) ունեցող, եթե միայն նա ձեռնարկատիրական գործունեությունը այդ Պետությունում իրականացնում է բրոքերի, կոմիսիոնների կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում: Սակայն եթե այդպիսի գործակալի գործունեությունը լիովին կենտրոնանում է այդպիսի ձեռնարկության համար գործողությունների վրա, ապա սույն կետի շրջանակներում նա չի դիտարկվի որպես անկախ կարգավիճակով գործակալ:

Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության առնչությամբ «անկախ կարգավիճակով գործակալ» արտահայտությունը նշանակում է ֆիզիկական անձ, որը հանդիսանում է մյուս Պայմանավորվող պետության ռեգիլենտ և աշխատանքային հարաբերությունների մեջ չէ առաջինը հիշատակված պետության ձեռնարկության հետ:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեգիլենտ հանդիսացող ձեռնարկությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեգիլենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ որն այդ մյուս պետությունում ձեռնարկատիրական գործունություն է իրականացնում (մշտական ներկայացուցչության (հաստատության) միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից մեկին չի վերածում մյուս ընկերության մշտական ներկայացուցչության:

## Հոդված 6 Եկամուտներ անշարժ գույքից

1. Այն եկամուտները, որոնք Պայմանավորվող պետության ռեգիլենտը ստանում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից (ներառյալ եկամուտը օյուղացիական կամ անտառային տնտեսությունից), կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» արտահայտությունը պետք է ունենա այն նշանակությունը, որը նա ունի այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Ծովային, գետային նավերը և օդանավերը, ավտոմոբիլիային տրանսպորտը և երկաթգծի շարժակազմը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տալուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. Եթե բաժնետոմսերի կամ ընկերությունում այլ կորպորատիվ իրավունքների տիրապետումը այդպիսի բաժնետոմսերի կամ կորպորատիվ իրավունքների տիրոջը տալիս է ընկերությանը պատկանող անշարժ գույքից օգտվելու իրավունք, ապա օգտվելու այդպիսի իրավունքի անմիջական օգտագործումից, վարձակալության տալուց կամ այլ ձևի օգտագործումից եկամուտները կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

5. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից եկամուտների և անկախ անհատական ծառայություններ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից եկամուտների նկատմամբ:

## Հոդված 7

### Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը հարկվում է միայն այդ պետությունում, եթե միայն այդ ձեռնարկությունը չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության (հաստատության) միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ ձևով, ապա նրա շահույթը կարող է հարկվել մյուս պետությունում, բայց միայն այն մասով, որը վերաբերում է այդ մշտական ներկայացուցչությանը (հաստատությանը):

2. Հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները՝ այն դեպքում, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության (հաստատության) միջոցով, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական ներկայացուցչությանը (հաստատությանը) վերագրվում է այն շահույթը, որ նա կարող էր ստանալ, եթե նա լիներ առանձնացված կամ առանձին ձեռնարկություն՝ զբաղված նույնպիսի կամ համանման գործունեությամբ նույնպիսի կամ համանման պայմաններում և գործեր մինզամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական ներկայացուցչությունն (հաստատությունն) է նա հանդիսանում:

3. Մշտական ներկայացուցչության (հաստատության) շահույթը որոշելիս թույլատրվում է այդպիսի մշտական ներկայացուցչության (հաստատության) նպատակների համար կատարված՝ փաստաթղթերով հաստատված ծախսերի հանում, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն բանից՝ այդ ծախսերը կատարվել են այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական ներկայացուցչությունը (հաստատությունը), թե նրա սահմաններից դուրս:

4. Քանի դեռ մի Պայմանավորվող պետության օրենսդրությամբ մշտական ներկայացուցչությանը (հաստատությանը) վերագրվող շահույթը կարող է որոշվել ձեռնարկության և նրա տարբեր ստորաբաժանումների միջև ընդհանուր շահույթի համանանական բաշխման հիման վրա, սույն հոդվածի 2-րդ կետի դրույթները չեն խոչընդոտի այդ Պայմանավորվող պետության կողմից այդպիսի բախման միջոցով հարկվող շահույթը հաշվարկելու համար:

5. Ոչ մի շահույթ մշտական ներկայացուցչությանը (հաստատությանը) չի հաշվեգրվի միայն այդ մշտական ներկայացուցչության (հաստատության) կողմից ձեռնարկության համար ապրանքներ կամ արտադրանք գնելու հիման վրա:

6. Նախորդ կետերի նպատակների համար, մշտական ներկայացուցությանը (հաստատությանը) վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե միայն դրա փոփոխման համար չկանոնավոր պատճառ:

7. Այն դեպքում, եթե շահույթը ներառում է եկամուտների այնպիսի տեսակներ, որոնց մասին առանձին խոսվում է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա այդ հոդվածների դրույթները չեն շոշափում սույն հոդվածի դրույթները:

## Հոդված 8 Միջազգային փոխադրումներ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում ծովային, գետային նավերի կամ օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների շահագործումից ստացվող շահույթը հարկվում է միայն այդ պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից ապրանքների և արտադրանքի փոխադրման համար օգտագործվող բեռնարկերի (ներառյալ տրեյլերները և բեռնարկերի փոխադրման համար այլ սարքավորումները) պահպանումից, օգտագործումից կամ վարձակալության տալուց ստացվող շահույթը հարկվում է միայն այդ Պայմանավորվող պետությունում:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև տրանսպորտային միջոցների շահագործման միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային կազմակերպությունում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ, բայց միայն շահույթի այն մասով, որը վերագրվում է համատեղ գործունեությունում նրա ունեցած մասնաբաժնին:

## Հոդված 9 Ասոցացված (զուգորդված) ձեռնարկություններ

### 1. Այն դեպքում, եթե՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, հսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակի կամ անուղղակի մասնակցում են և մի Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, հսկմանը կամ կապիտալում, և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև, նրանց առևտրային և ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ

սահմանվում են պայմանները, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր վերագրվել դրանցից մեկին, բայց այդ պայմանների առկայության պատճառով նրան չի վերագրվել, կարող է մտցվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, եթե մի Պայմանավորվող պետությունը այդ պետության ձեռնարկության շահույթում ներառում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս պետությունում, և այդ կերպ ներառված շահույթը հանդիսանում է շահույթ, որը կվերագրվեր առաջինը հիշատակված պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև հարաբերությունները լինեին այնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև է, ապա այդ մյուս պետությունը կկատարի այդ վերագրված շահույթի հարկի համապատասխան ճշտում: Այդպիսի ճշտումը որոշելիս պատշաճորեն հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում փոխադարձաբար կխորհրդակցեն:

## Հոդված 10 Շահաբաժիններ

1. Մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն նման շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը, այդ պետության օրենսդրությանը համապատասխան, բայց եթե ստացողը հանդիսանում է շահաբաժինների փաստացի սեփականատերը, ապա այդ կերպ գանձվող հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատերը հանդիսանում է ընկերություն, որը տիրապետում է շահաբաժիններ վճարող ընկերության հիմնադիր ֆոնդի առնվազն 25 տոկոսին,

բ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ բոլոր մնացած դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ սահմանում են այդ սահմանափակման կիրառման եղանակը:

Այս կետը չի շոշափում ընկերության հարկումը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ կորպորատիվ իրավունքներից, որը ենթակա է նույնական հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից ստացվող եկամուտը՝ այն պետության օրենսդրությանը համապատասխան, որի ռեգիդենտն է հանդիսանում շահույթը բաշխող ընկերությունը:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեգիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեգիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ձեռնարկությունը, այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության (հաստատության) միջոցով կամ այդ մյուս պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայից, և տիրապետումը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրոք վերաբերում են նման մշտական ներկայացուցչությանը (հաստատությանը) կամ մշտական բազային: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

5. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող պետության ռեգիդենտ համարվող ընկերությունը շահույթ կամ եկամուտներ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս պետությունը կարող է հարկերից լրիվ ազատել այդ ընկերության կողմից վճարվող շահաբաժինները, բացառությամբ, եթե այդ շահաբաժինները վճարվում են այդ մյուս պետության ռեգիդենտին, կամ եթե տիրապետումը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրոք վերաբերում է այդ մյուս պետությունում գտնվող մշտական ներկայացուցչությանը (հաստատությանը) կամ մշտական բազային, և չի կարող հարկման ենթակել ընկերության չբաշխված շահույթը, եթե նույնիսկ շահաբաժինները վճարվում են, կամ չբաշխված շահույթը լրիվ կամ մասնակիորեն կազմված է այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

1. Մի Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն նման տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են, այդ պետության օրենսդրությանը համապատասխան, բայց եթե ստացողը հանդիսանում է տոկոսների փաստացի սեփականատերը, ապա այդ կերպ գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այդ փոխադարձ համաձայնությամբ սահմանում են սահմանափակման կիրառման եղանակը:

3. «Տոկոսներ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից՝ անկախ հիպոթեքային ապահովումից և պարտապահի շահույթներին մասնակցելու իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և պարտատոմսերից կամ պարտքային պարտավորություններից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ պարտքային պարտավորությունների գործ պարզավճարներն ու շահումները: Սույն Համաձայնագրի նպատակների համար ժամկետանց վճարումների դիմաց տուգանքները որպես տոկոսներ չեն դիտվում:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեգիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության (հաստատության) միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայից, և պարտապահանջը, որի հիման վրա տոկոսները վճարվում են, իրոք վերաբերում է նման մշտական ներկայացուցչությանը (հաստատությանը) կամ մշտական բազային: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները՝ կախված հանգամանքներից:

5. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող պետությունում, եթե վճարող հանդիսանում է ինքը՝ այդ պետությունը, նրա իշխանության տեղական մարմինը կամ այդ պետության ռեգիդենտը: Իսկ եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտ է հանդիսանում, թե ոչ, Պայմանավորվող պետությունում ունի մշտական ներկայացուցչություն (հաստատություն) կամ մշտական բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որից տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է

նման մշտական ներկայացուցչությունը (հաստատությունը) կամ մշտական բազան, ապա համարվում է, որ նման տոկոսներն առաջանում են այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական ներկայացուցչությունը (հաստատությունը) կամ մշտական բազան:

6. Եթե վճարողի և տոկոսների փաստացի սեփականատիրոց միջև, կամ նրանց երկուսի և որևէ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով վճարման համար հիմք ծառայող պարտապահանջին վերաբերող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և տոկոսների փաստացի սեփականատիրոց միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրարվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասը առաջվա պես ենթակա է հարկման Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան՝ պատշաճորեն հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

## Հոդված 12

### Ոոյալթի

1. Մի Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են այդ Պետության օրենդրությանը համապատասխան, սակայն եթե ստացողը հանդիսանում է ռոյալթի փաստացի սեփականատերը, ապա այդ դեպքում հարկը չպետք է գերազանցի ռոյալթի ընդհանուր գումարի 10%-ը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այդ փոխադարձ համաձայնությամբ սահմանում են սահմանափակման կիրառման եղանակը:

3. «Ոոյալթի» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործելիս նշանակում է ցանկացած տեսակի վճարումներ, որոնք ստացվում են որպես փոխադարձուցում գրականության, արվեստի կամ գիտության ստեղծագործությունների, ներառյալ կինոնկարները (կամ ռադիոհաղորդումների կամ հեռուստատեսության համար օգտագործվող ֆիլմերը կամ ձայնագրությունները), ցանկացած պատենտի, առևտրանիշի, դիզայնի կամ մոդելի, պլանի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի օգտագործման կամ դրանց նկատմամբ հեղինակային իրավունքների օգտագործման իրավունքի տրամադրման համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների օգագործման կամ օգտվելու իրավունքի տրամադրման համար, կամ

արդյունաբերական, առևտրային կամ գիտական փողծին վերաբերող տեղեկության համար:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթի փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության (հաստատության) միջոցով, կամ այդ մյուս պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց նկատմամբ վճարվում է ռոյալթին, իրոք կապված են այդպիսի մշտական ներկայացուցչության (հաստատության) կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, հանգանանքներից կախված, կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, երբ վճարող է հանդիսանում ինքը՝ այդ պետությունը, նրա իշխանության տեղական մարմինը, կամ այդ պետության ռեզիդենտը: Իսկ եթե ռոյալթի վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, Պայմանավորվող պետությունում ունի մշտական ներկայացուցչություն (հաստատություն) կամ մշտական բազա, որի կապակցությամբ առաջացել է պարտավորություն, որով վճարվում է ռոյալթի, և այդ ռոյալթի վճարման ծախսերը կրում է այդ մշտական ներկայացուցչությունը (հաստատությունը) կամ մշտական բազան, ապա համարվում է, որ ռոյալթին առաջանում է այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական ներկայացուցչությունը (հաստատությունը) կամ մշտական բազան:

6. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև կամ նրանց երկուսի և երրորդ անձի միջև հաստուկ հարաբերությունների պատճառով վճարման համար հիմք ծառայող օգտագործմանը, իրավունքին կամ տեղեկատվությանը վերաբերող ռոյալթի գումարը գերազանցում է այն գումարը, որը համաձայնեցված կլիներ վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև այդպիսի հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասն առաջվա պես ենթակա է հարկման Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան՝ պատշաճորեն հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

1. Պայմանավորվող պետության ռեգիլենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի (ինչպես այն սահմանված է 6-րդ հոդվածում) օտարումից ստացված եկամուտները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական ներկայացուցչության (հաստատության) առևտրային գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մի Պայմանավորվող պետության ռեգիլենտի տրամադրության տակ անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական բազային վերաբերող շարժական գույքի օտարումից եկամուտները, ներառյալ այդպիսի մշտական ներկայացուցչության (հաստատության) եկամուտներ՝ առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին, կամ այդպիսի մշտական բազայի օտարումից եկամուտները, կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային նավերի կամ օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտի միջոցների կամ դրանց շահագործման հետ կապված շարժական գույքի օտարումից Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից ստացվող եկամուտները հարկվում են միայն այդ պետությունում:

4. Պայմանավորվող պետության տարածքում գտնվող գլխավորապես անշարժ գույքից ուղղակի կամ անուղղակի կազմված ակտիվներ ունեցող ընկերության բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների օտարումից ստացվող եկամուտները կարող են հարկվել այդ Պետությունում:

5. Պայմանավորվող պետության ռեգիլենտ հանդիսացող ընկերության կապիտալի բաժնետոմսերի, բացի սույն հոդվածի 4-րդ կետում հիշատակվածից, օտարումից եկամուտները կարող են հարկվել այդ պետությունում:

6. Ցանկացած այլ գույքի օտարումից, այլ, քան նրանք, որոնց մասին խոսվում է սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում, առաջացած եկամուտները հարկվում են միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեգիլենտն է հանդիսանում գույքը օտարող անձը:

## Հոդված 14

### Անկախ անձնական ծառայություններ

1. Մի Պայմանավորվող պետության ռեգիլենտի կողմից մասնագիտական ծառայությունների մատուցումից կամ այլ անկախ բնույթի գործունեությունից ստացվող եկամուտը հարկվում է միայն այդ

Պայմանավորվող պետությունում: Սակայն այդպիսի Եկամուտը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, եթե.

ա) նա ունի մյուս Պայմանավորվող պետությունում իր գործունեությունն իրականացնելու նպատակների համար մատչելի մշտական բազա, կամ

բ) նա գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում ցանկացած տասներկուամյայ ժամանակաշրջանի ընթացքում՝ ընդհանուր առմամբ 183 օրը գերազանցող ժամկետի կամ ժամկետների ընթացքում, և միայն այդ մյուս պետությունում մատուցված ծառայություններին վերաբերող Եկամտի մասով:

2. «Մասնագիտական ծառայություններ» արտահայտությունը ներառում է, մասնավորապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ դասախոսական գործունեություն, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ինժեներների, ճարտարապետների, ատամնաբույժների, հաշվապահների և առողջապահության անկախ գործունեություն:

## Հոդված 15 Կախյալ անձնական ծառայություններ

1. Հաշվի առնելով 16-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների դրույթները՝ կապված վարձու աշխատանքի հետ, մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից ստացվող ռոձիկը, աշխատավարձը և նման այլ վարձատրությունները, հարկվում են միայն այդ պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվում է նման ձևով, ապա այդ առնչությանը ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից ստացվող՝ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի հետ կապված վարձատրությունը հարկվում է միայն առաջինը հիշատակված պետությունում, եթե.

ա) ստացողը գտնվում է մյուս պետությունում տվյալ օրացուցային տարում սկսվող կամ ավարտվող ցանկաված տասներկուամյա ժամանակաշրջանում՝ ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածի կամ ժամանակահատվածների ընթացքում, և

բ) վարձատրությունը վճարվում է այդ մյուս պետության ռեգիդենտ չհանդիսացող վարձողի կողմից կամ վարձողի անունից, և

գ) վարձատրությունների վճարնան ծախսերը չեն կրում այդ մյուս Պետությունում վարձողի ունեցած մշտական ներկայացուցչությունը (հաստատությունը) կամ մշտական բազան:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ միջազգային փոխադրումներում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային, գետային նավում կամ օդանավում, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցի վրա իրականացվող վարձու աշխատանքի հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ պետությունում:

### Հոդված 16 Տնօրենների հոնորարները

Մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից որպես մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ ստացվող տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

### Հոդված 17 Արտիստների և մարզիկների եկամուտները

1. Անկախ 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից՝ մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից որպես արվեստի աշխատող, ինչպիսին են թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության աշխատողները, կամ երաժշտության աշխատողները, կամ որպես մարզիկ մյուս Պայմանավորվող պետությունում որպես այդպիսին իրականացվող իր անձնական գործունեությունից ստացվող եկամուտը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Եթե արվեստի աշխատողի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացվող անձնական գործունեության եկամուտը վերագրվում է ոչ թե բուն արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա, անկախ 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից, այդ եկամուտը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունն իրականացվում է:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն վերաբերում արվեստի աշխատողների կամ մարզիկների՝ Պայմանավորվող պետությունում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներին, եթե այդ պետություն այցելությունը ամբողջովին ֆինանսավորվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի, կամ նրանց տեղական իշխանության մարմինների հասարակական իիմնադրամներից: Նման դեպքում եկամուտը հարկվում է միայն այն

Պայմանավորվող պետությունում, որի ռեգիստրացիան է հանդիսանում տվյալ արվեստի աշխատողը կամ մարզիկը:

### Հոդված 18 Կենսաթոշակներ

Հաշվի առնելով 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեգիստրացիան նրա նախկին վարձու աշխատանքի հետ կապված վճարվող կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկնան միայն այդ Պետությունում:

### Հոդված 19 Պետական ծառայություն

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ցանկացած ֆիզիկական անձին այդ պետությանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների առնչությամբ վճարվող կենսաթոշակ չհամարվող վարձատրությունը հարկվում է միայն այդ պետությունում:

բ) Սակայն այդպիսի վարձատրությունը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում, և ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեգիստրացիանը, որը.

- ի) հանդիսանում է այդ պետության քաղաքացի, կամ
- ii) չի դարձել այդ պետության ռեգիստրացիանը միայն ծառայությունները մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից, կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ցանկացած ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը կամ նրա իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների առնչությամբ վճարվող ցանկացած կենսաթոշակ հարկվում է միայն այդ պետությունում:

բ) Սակայն նման կենսաթոշակը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեգիստրացիանը ու քաղաքացի:

3. 15-րդ, 16-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կկիրառվեն Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացան հետ կապված մատուցվող ծառայությունների առնչությամբ վարձատրության ու կենսաթոշակների նկատմամբ:

## Հոդված 20 Ուսանողներ

1. Մինչև անմիջականորեն մի Պայմանավորվող պետություն ժամանելը մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ հանդիսացող և առաջինը հիշատակված Պետությունում բացառապես ուսանելու կամ կրթություն ստանալու նպատակով գտնվող ուսանողի կամ ստաժորի կողմից ստացվող և ապրելու, ուսանելու կամ կրթություն ստանալու համար նախատեսված վճարումները չեն հարկվում այդ Պետությունում, եթե այդ վճարումներից աղբյուրները գտնվում են այդ Պետության սահմաններից դուրս:

2. Ուսանողին կամ ստաժորին մյուս Պայմանավորվող պետությունում մատուցվող ծառայությունների համար վճարվող վարձատրությունները, կախված հանգամանքներից, հնգամյա ժամանակաշրջանով չեն հարկվի այդ պետությունում՝ պայմանով, որ այդպիսի ծառայությունները կապված են նրանց կրթության, ապրուստի կամ ուսման հետ:

## Հոդված 21 Այլ եկամուտներ

1. Մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված եկամուտների տեսակները, անկախ դրանց առաջացման աղբյուրից, ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամուտներից տարբեր այլ եկամուտների նկատմամբ, եթե նման եկամուտներ ստացողը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեգիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ տեղակայված մշտական ներկայացուցչության (հաստատության) միջոցով կամ այդ մյուս պետությունում մատուցում է անկախ անձնական ծառայություններ այնտեղ գտնվող մշտական բազայից, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ ստացվել է եկամուտը, իրոք կապված է այդպիսի մշտական ներկայացուցչության (հաստատության) կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից ելնելով, կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

3. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացող եկամուտների տեսակները նույնպես կարող են հարկել այդ մյուս Պետությունում:

## Հոդված 22

### Գույք

1. Մի Պայմանավորվող պետության ռեգիլենտի սեփականություն հանդիսացող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքը, որի մասին խոսվում է 6-րդ հոդվածում, կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական ներկայացուցչության (հաստատության) առևտրային գույքի մաս հանդիսացող շարժական գույքը կամ մի Պայմանավորվող պետության ռեգիլենտի տնօրինության տակ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող ամկախ անձնական ծառայություններ մատուցելու նպատակով տեղաբաշխած մշտական բազայի հետ կապված շարժական գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Պայմանավորվող պետության ռեգիլենտի սեփականություն հանդիսացող, միջազգային փոխադրումներում շահագործվող և որպես ծովային, գետային նավեր կամ օդանավեր, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցներ և դրանց շահագործման հետ կապված շարժական գույք ներկայացված գույքը հարկվում է միայն այդ պետությունում:

4. Մի Պայմանավորվող պետությունում գտնվող գլխավորապես անշարժ գույքից կազմված ակտիվներ ունեցող ընկերության բաժնետոմսերով կամ այլ կորպորատիվ իրավունքներով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ պետությունում:

5. Պայմանավորվող պետության ռեգիլենտի գույքի մյուս բոլոր տարրերը հարկվում են միայն այդ պետությունում:

## Հոդված 23

### Կրկնակի հարկման վերացումը

1. Եթե մի Պայմանավորվող պետության ռեգիլենտը եկամուտ է ստանում կամ տիրապետում է գույքի, որը սույն Համաձայնագրի դրույթների համաձայն կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջինը հիշատակված Պետությունը թույլ կտա.

ա) այդ ռեգիլենտի եկամտի հարկից հանել այդ մյուս պետությունում վճարված եկամտի հարկին հավասար գումար,

բ) այդ ռեգիլենտի գույքի հարկից հանել այդ մյուս պետությունում վճարված գույքի հարկին հավասար գումար:

Այդ հանումները, բոլոր դեպքում, չպետք է գերազանցեն եկամտի կամ գույքի հարկի մասը՝ հաշվարկված այն եկամտին կամ այն գույքին

վերաբերող հանումի տրամադրումից, որոնք, կախված հանգամանքներից, կարող էին հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե Համաձայնագրի ցանկացած դրույթին համապատասխան մի Պայմանավորվող պետության ռեգիստրացիա եկամուտը կամ գույքը այդ Պետությունում ազատված է հարկից, այդ Պետությունը կարող է, այդուհանդերձ, այդ ռեգիստրացիա գույքի կամ եկամտի մնացած մասի հարկի գումարը որոշելիս հաշվի առնել հարկից ազատված եկամուտը կամ գույքը:

### Հոդված 24 Անխտրականություն

1. Մի Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունն է, որին ենթարկվում են այդ մյուս Պետության ազգային անձինք նույն հանգամանքների դեպքում, մասնավորապես, ռեգիստրացիան առումով: Այս դրույթը, չնայած 1-ին հոդվածի դրույթներին, կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեգիստրացիան չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեգիստրացիա, քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությանը, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունն է, որին նույն հանգամանքների դեպքում ենթարկվում են այդ Պետությունների ազգային անձինք:

3. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական ներկայացուցչության (հաստատության) հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է նվազ բարենպաստ լինի, քան այդ մյուս Պետությունում համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումն է: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող մի Պայմանավորվող պետության՝ մյուս Պայմանավորվող պետության ռեգիստրացիաներին տրամադրելու հարկման գծով որևէ անձնական արտոնություն, հարկային հանումներ և գեղչեր՝ նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան պարտավորությունների հիման վրա, որոնք նա տրամադրում է իր սեփական ռեգիստրացիան:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 6-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, մի Պայմանավորվող պետության ձեռնարկության կատարած

տոկոսները, ռոյալթին կամ այլ վճարումները մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին պետք է նման ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա լինեն հանման այն նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեգիդենտին վճարելիս: Նմանապես, մի Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին, այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով, պետք է ենթակա լինի հանման այն նույն պայմաններով, ինչ որ պարտքը առաջինը հիշատակված Պետության ռեգիդենտին:

5. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալը լրիվ կամ մասնակիորեն հանդիսանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեգիդենտների սեփականությունը, ուղղակի կամ անուղղակի հսկում է նրանց կողմից, չետք է ենթարկվեն առաջինը հիշատակված Պետությունում ցանկացած հարկման կամ դրա հետ կապված ցանկացած պարտավորության՝ այլ կամ ավելի ծանր, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունն է, որին ենթարկվում են առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկություններ:

### Հոդված 25 Փոխհամաձայնեցման ընթացակարգը

1. Եթե անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կիանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, քննարկման համար իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմիններին, որի ռեգիդենտն է ինքը, կամ, եթե դեպքը վերաբերում է 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պետության իրավասու մարմիններին, որի քաղաքացին է նա: Դիմումը պետք է ներկայացվի Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողությունների մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Իրավասու մարմինը կճզտի, եթե դիմումը համարի հիմնավորված, և եթե ինքը ի վիճակի չի լինի հանգելու գոհացուցիչ որոշման, հարցը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ Համաձայնագրին չհամապատասխանող հարկումից խուսափելու նպատակով: Ցանկացած ձեռք բերված պայմանավորվածություն պետք է կատարվի անկախ Պայմանավորվող պետությունների ազգային օրենսդրությունում առկա որևէ ժամանակային սահմանափակումների:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կծգուեն փոխհամաձայնությամբ լուծել բոլոր դժվարությունները կամ կասկածները, որոնք կարող են առաջանալ սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ Համաձայնագրով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի ընթացման մեջ համաձայնության հասնելու նպատակով: Իրավասու մարմինները խորհրդակցությունների միջոցով կմշակեն համապատասխան երկկողմ ընթացակարգեր, պայմաններ, մեթոդներ և մեթոդիկաներ, սույն հոդվածով նախատեսված փոխհամաձայնեցման ընթացակարգի կիրառման համար:

### Հոդված 26 Տեղեկությունների փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի կամ Պայմանավորվող պետությունների ազգային օրենսդրությունների դրույթների կիրառման համար անհրաժեշտ տեղեկություններ կփոխանակեն այն հարկերի վերաբերյալ, որոնց վրա տարածվում է Համաձայնագրի այն չափով, որքանով հարկումը չի հակասում Համաձայնագրին: Տեղեկությունների փոխանակումը 1-ին հոդվածով չի սահմանափակվում: Պայմանավորվող պետության ստացած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես որ այդ Պետության ազգային օրենսդրության շրջանակում ստացված տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք գրադարձ են Համաձայնագրով ընդգրկվող հարկերը գնահատելով կամ հավաքելով, բռնագանձումով կամ դատական հետապնդումով կամ բողոքարկումների քննումով: Անձինք կամ մարմինները այդ տեղեկությունը պետք է օգտագործեն միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել այդ տեղեկությունը դռնբաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներ ընդունելիս:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետություններին պարտավորեցնող.

ա) անցկացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) տրամադրելու տեղեկություն, որը չի կարելի ստանալ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությամբ կամ սովորական վարչական պրակտիկայի ընթացքում,

գ) տրամադրելու տեղեկություն, որը կբացահայտեր որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկություն, որի բացահայտումը կիակասեր պետական քաղաքականությանը (հասարակարգին):

## Հոդված 27 Օգնություն հարկերի գանձման գործում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները պարտավորվում են միմյանց աջակցություն ցույց տալ սույն Համաձայնագրով ընդգրկվող հարկերի՝ հարկային օրենսդրության խախտման համար նախատեսված տոկոսների, տույժերի և տուգանքների հետ մեկտեղ գանձման գործում, որը կոչվում է պետական եկամուտների գանձում:

2. Պետական եկամուտների գանձման գործում օգնություն ցույց տալու մասին Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հարցումը ներառում է այնպիսի լիազորություններից օգտվելու վկայականի հանձնում, որ այդ Պետության օրենսդրությանը համապատասխան պետական եկամուտների գանձումը լինի վերջնականապես որոշված: Սույն հոդվածի նպատակների համար պետական եկամուտների գանձումը լիովին որոշված է, երբ Պայմանավորվող պետությունը իրավունք ունի, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, հավաքել պետական եկամուտները, իսկ հարկատուն այդ հավաքը հետ պահելու ոչ մի իրավունք չունի:

3. Մի Պայմանավորվող պետության պետական եկամուտների գանձումը, որն ընդունվել է մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից, մյուս պետությունը կատարում է այնպես, ինչպես եթե այդպիսի գանձումը լիներ մյուս Պետության սեփական եկամուտ և վերջնականապես որոշված՝ իր հարկերի գանձմանը վերաբերող նրա օրենսդրության դրույթներին համապատասխան:

4. Մի Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից՝ սույն հոդվածի համաձայն հավաքած գումարները փոխանցվում են մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնին: Սակայն, եթե Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները գալիս են այլ համաձայնության, գանձումների ժամանակ օգնությունը ապահովելու ուղղությամբ սովորական ծախսերը իր վրա է վերցնում առաջինը հիշատակված Պետությունը, իսկ մնացած բոլոր ծախսերը իր վրա է վերցնում մյուս Պետությունը:

5. Ըստ սույն հոդվածի պայմանի, մի Պայմանավորվող պետության կողմից հարկատուի առնչությամբ հարկերի գանձման գործում օգնության մասին հարցման գծով որևէ օգնություն չի տրամադրվի, եթե նման հարցումը վերաբերում է մի ժամանակաշրջանի, որի ընթացքում հարկատուն եղել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ:

6. Սույն հոդվածում ոչինչ չի մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետություններից որևէ մեկին այնպիսի բնույթի վարչական միջոցներ կիրառելու պարտավորեցնող, որոնք տարբերվում են սեփական հարկերի գանձման ժամանակ կիրառվողներից, կամ որոնք հակասում են իր հասարակական քաղաքականությանը (հասարակարգին):

### Հոդված 28

#### Դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների անդամները

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի շոշափում դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների անդամների՝ միջազգային իրավունքի ընդհանուր նորմերով կամ հատուկ համաձայնագրերի հիման վրա սահմանված հարկային արտոնությունները:

### Հոդված 29

#### Ուժի մեջ մտնելը

1. Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում:

2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակման օրվանից հետո, և դրա դրույթները կվիրառվեն.

ա) աղբյուրի գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից հետո վճարվող գումարների նկատմամբ,

բ) եկամուտների և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկման ժամանակաշրջանների նկատմամբ:

### Հոդված 30

#### Գործողության դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրը մնում է ուժի մեջ մինչև Պայմանավորվող պետություններից մեկը այն չեղյալ չհայտարարի: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է չեղյալ հայտարարել

Համաձայնագիրը՝ այն չեղյալ հայտարարելու մասին սույն Համաձայնագիրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող հնգամյա ժամանակահատվածից հետո ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ, դիվանագիտական ուղիներով ծանուցելու միջոցով:

2. Այդ դեպքում Համաձայնագիրը դադարեցնում է գործողությունը.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարվող գումարների նկատմամբ,

բ) եկամուտներից և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցումը հանձնելու տարին հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից սկսվող հարկման ժամանակաշրջանների համար:

Ի հավաստումն որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրողները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Աշգարատ քաղաքում 1997 թվականի հունիսի 5ին, երկու բնօրինակով՝ հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարագոր են:

Մեկնաբանման ժամանակ տարածայնությունների դեպքում որպես հիմք ընդունվում է ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի հունվարի 1-ից: